ՍՈՆԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ
Տնտեսագիտություն, բակալավրիատ,
4-րդ կուրս

ՕՐԳԱՆԱԿԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՀՀ-ՈՒՄ

Հիմնաբառեր. *օրգանական գյուղատնտեսություն, հողային ռեսուրսներ, օրգանական պարարտանյութեր, սերտիֆիկացում, ԳՄՕ*

Աշխատանքում ուսումնասիրվել են օրգանական գյուղատնտեսության էությունը, առավելությունները, նպատակները, խնդիրները և կատարվել են եզրահանգումներ: Ներկայացված են օրգանական արտադրանքի չափորոշիչները, տեղն ու դերը շուկայում: Աշխատանքի նպատակն է բացահայտել օրգանական գյուղատնտեսության հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում:

Ներածություն: ՀՀ-ում գյուղատնտեսությունը խոշոր և գերակա տնտեսական ճյուղ է, ուստի կարևոր դեր ունի երկրի սոցիալ-տնտեսական իրավիճակի բարելավման և ապահովման գործում: Զարգացած գյուղատնտեսության շնորհիվ՝ հնարավոր է ապահովել երկրի պարենային անվտանգությունը: Ավելի մեծ շահույթ ստանալու, բնակչության կարիքները և պահանջմունքները բավարարելու նպատակով արհեստական թունաքիմիկատները ներթափանցեցին գյուղատնտեսական շուկա՝ դանդաղ քայքայելով սպառողի առողջությունը: Բազմաթիվ երկրներում ավանդական, գյուղատնտեսությանը զուգընթաց, զարգանում է օրգանական գյուղատնտեսությունը: Վերջինս արտադրության կառավարման միասնական համակարգ է, որը խթանում և ամրապնդում է առողջ ագրոէկոհամակարգը, այդ թվում՝ կենսաբազմազանությունը, կենսաբանական շրջափուլերը և հողի կենսաբանական ակտիվությունը[1]: Այն միտված է գյուղատնտեսական արտադրանքի տնտեսական շահավետությունը բնապահպանական հիմնախնդիրների հետ զուգակցելուն: Արդյունքում, գյուղատնտեսական ռեսուրսները օգտագործվում են ռացիոնալ և ստեղծվում է էկոլոգիապես մաքուր արտադրանք: Օրգանական գյուղատնտեսությունն առաջին անգամ ՀՀ-ում ներկայացվել է 2002 թվականին: Օրգանական գյուղատնտեսության արտադրության ընդհանուր հողատարածքը 2012 թվականին կազմում էր 19000 հեկտար, որը ներառում է հավաստագրված գյուղատնտեսական ու վայրի հավաքի տարածքներ ու անցումային դեպի օրգանական հողեր[2]:

Կլիմայական փոփոխությունները համաշխարհային մարտահրավեր են աշխարհի բոլոր երկրների կայուն զարգացման համար, և այստեղ տեղին է մեջբերել՝ «Մտածի՛ր գլոբալ, գործի՛ր լոկալ» (Think global, act local) հայտնի արտահայտությունը, որն այս դեպքում նշանակում է տարբեր տարածաշրջաններում երկրագործական համակարգերի կենսաբանականացում, էկո-

---

[1] ՊԳՆ/ՀԱԿ կոդեքս ալիմենտարիուսի հանձնաժողով, 2007:

[2] Դարբինյան Ն., «ՀՀ-ում օրգանական շուկայի ներկա իրավիճակը, խնդիրներն ու հնարավորությունները», ՀՀ գյուղատնտեսության նախարարին կից հասարակական խորհրդի 02.11.2016 թ.-ի նիստի զեկույց:

լոգիացում ու ընդլայնում, որոնք նպաստելու են միկրոկլիմայական, ապա գլոբալ փոփոխությունների մեղմմանն ու վերականգնմանը, քանի որ միջավայրի էկոլոգիացումը անձի, անհատի և հասարակության էկոլոգիական մտածողության հետևանքն է[1]:

Մասնագիտական գրականության ակնարկ: 2009 թվականից օրգանական գյուղատնտեսության ոլորտը կարգավորվում է ըստ «ՀՀ օրենքը օրգանական գյուղատնտեսության մասին» իրավական ակտի: Օրենքում ներկայացված են օրգանական գյուղատնտեսության վարման իրավական հիմքերը, օրգանական գյուղատնտեսության մեջ օգտագործվող հիմնական հասկացությունները, սկզբունքները, ոլորտի պետական կարգավորումը, օրգանական գյուղատնտեսական արտադրանքի մակնշմանը և ապրանքաշրջանառությանը ներկայացվող հիմնական պահանջները և բնագավառում պետական աջակցությունը[2]:

Կարծում եմ՝ ոլորտի գլխավոր խնդիրներից մեկը ՀՀ-ում օրգանական գյուղատնտեսության մասին տեղեկատվության պակասն է: Հիմնական տեղեկատվական աղբյուր է էկոնոմիկայի նախարարության կայքէջի համապատասխան բաժնում տեղադրված՝ «Օրգանական գյուղատնտեսության ուղեցույցը», որը տպագրվել է 2018 թվականին՝ ՊԳԿ-ի կողմից՝ 2015 թվականին տպագրված «Training Manual for Organic Agriculture»-ի հիման վրա: Վերջին տարիներին հետազոտություններ չեն կատարվել օրգանական գյուղատնտեսության մասին, ՀՀ վիճակագրական կոմիտեն վերլուծություններ չի կատարում ոլորտի վերաբերյալ:

Մեթոդաբանություն: Ուսումնասիրությունը կատարվել է երկրորդային տվյալների հիման վրա:

Հետազոտության արդյունքներ և քննարկում: Օրգանական գյուղատնտեսության նպատակն է գյուղատնտեսական ռեսուրսների արդյունավետ կառավարման միջոցով նպաստել գյուղատնտեսության ոլորտի կայունության ամրապնդմանը: Օրգանական գյուղատնտեսության կայունությունը բաղկացած է տնտեսական, էկոլոգիական և սոցիալական նպատակներից (հավելված 1)[3]:

Հողի բերրիությունը գյուղատնտեսության արտադրողականության հիմնական գրավականն է: Ոչ ճիշտ վարման հետևանքով հողային ռեսուրսները դեգրադացվում են: Հողերի դեգրադացիան մեր երկրում առաջնահերթ խնդիր է համարվում (հավելված 2): Դեգրադացված են համարվում այն հողերը, որոնք մարդու ուղղակի կամ անուղղակի ազդեցությամբ կորցրել են իրենց սկզբնական տնտեսական արժեքը, բացասական աղբյուր են շրջակա միջավայրի համար[4]: Ավելի արդյունավետ է դեգրադացիայի կանխումը, քան պայքարը հետևանքների դեմ:

Օրգանական գյուղատնտեսության մեջ օգտագործվում են այն հողերը, որոնք երեք տարի զերծ են մնացել քիմիական միջոցների օգտագործումից: Կենսահումուսը, գոմաղբը, թռչնաղբը բարելավում են հողի կառուցվածքը,

---

[1] Երիցյան Ս.Կ., Գրիգորյան Հ.Է., Օրգանական երկրագործության հիմունքներ. ձեռնարկ, Եր., 2019:

[2] «ՀՀ օրենքը օրգանական գյուղատնտեսության մասին» ՀՀՊՏ, 2008.05.14/28(618), հոդ. 451:

[3] Օրգանական գյուղատնտեսության ուղեցույց, 2018, էջ 9:

[4] Հողերի վերականգնման պլանավորում և տեխնոլոգիաների կիրառում, 2016:

հարստացնում են հողը օրգանական նյութերով, բարձրացնում են բերրիության մակարդակը[1]: Գոմաղբը ամենատարածված օրգանական պարարտանյութն է, հասուն գոմաղբը պարունակում է 0,5% ազոտ, 0,25% ֆոսֆոր և 0,6% կալիում: Այն լիարժեք պարարտանյութ է, իր մեջ պարունակում է բույսերի սննդառության համար անհրաժեշտ համարյա բոլոր տարրերը: Հողը գոմաղբով պարարտացնելու դեպքում բարձրանում է ոչ միայն տվյալ, այև ապագա տարիների նույն հողամասում ցանվող մշակաբույսերի բերքատվությունը: Թռչնաղբը բարձրարժեք, արագ ներգործող և լավ լուծվող օրգանական պարարտանյութ է, որտեղ սննդատարրերի պարունակությունն ավելի շատ է, քան գոմաղբի մեջ: Այն պարունակում է 1,6% ազոտ, 1,5% ֆոսֆոր և 0,8% կալիում[2]:

2011 թվականին Հայաստանում ստեղծվել է հայ-նորվեգական համատեղ «Կանաչ ընկերությունը»՝ ՕՌՎԱԿՕ ՓԲԸ-ն, որը զբաղվում է օրգանական թափոնների վերամշակմամբ՝ փոխակերպելով դրանք տարատեսակ օրգանական կենսածին պարարտանյութերի և հողի բարելավիչների: Արտադրությունը հիմնված է բնական գործընթացների վրա՝ նպատակ ունենալով փակելու բնապահպանական շղթան և խթանելու անթափոն արտադրությունը. կալիֆորնիական կարմիր որդերի միջոցով օրգանական թափոնների վերամշակումից ստացվող մաքուր կենսահումուսը հիմք է դառնում տարատեսակ օրգանական պարարտանյութերի ստացման համար, որոնք իրենց սննդատարրերի հարուստ կազմով բարելավում հողի հատկանիշները, բարձրացնում բերքատվությունը և հիմնովին ապահովում բույսերի առողջ աճն ու զարգացումը[3]:

Այսպիսով՝ ՀՀ-ում հողային ռեսուրսների բարելավման համար անհրաժեշտ է օգտագործել օրգանական պարարտանյութեր, որոնց արդյունավետությունը պայմանավորված է տնտեսությունում ագրոտեխնիկական համալիր միջոցառումների կիրառմամբ: Հողերի բարելավման լավագույն մեթոդներից մեկը ջերմային մշակումն է, որի արդյունքում մեծ քանակությամբ տարբեր վնասատուներ և մոլախոտեր են ոչնչանում: Անհրաժեշտ է ապահովել հողերի նպատակային օգտագործումը՝ դեգրադացումից խուսափելու համար, կատարելագործել հողերի պահպանության, օգտագործման պետական վերահսկողությունը:

ՀՀ-ում օրգանական գյուղատնտեսության ձևավորման և զարգացման գործում կարևորագույն դերակատարում ունի 2002-ին հիմնված «Էկոգլոբ» ընկերությունը: «Էկոգլոբը» օրգանական գյուղատնտեսության և սննդամթերքի արտադրության հավաստագրման միջազգային ճանաչում ունեցող մարմին է, որը համապատասխանում է ISO Guide 65-ին և EN 45011-ին: Հավաստագրման իրավունք ստացել է գերմանական «DAP» կազմակերպության կողմից՝ ԵՄ շուկայի համար: «Էկոգլոբն» արտոնագրում է՝ համաձայն Եվրամիության օրենսդրության (EU Regulations 834/2007, 889/2008 և 1235/2008 համարժեք), Շվեյցարական օրգանական գյուղատնտեսության օրենքի (SWISS Organic Farming Ordinance equivalence), ԱՄՆ գյուղդեպարտամենտի «Ազգային օրգանական ծրագրի» (USDANOP 7 CFR 205), մասնավոր «Գրին

[1] Գերմանիայի բնության պահպանության միություն, nabu.am
[2] Հողերի պտղաբերության բարելավում այգեգործության համար, agroecoarm.com
[3] orwaco.am

Կովկաս» ստանդարտի և ապրանքանշանի ու Միջազգային առողջապահության կազմակերպության «Կոդեքս ալիմենտարիուսի» (WHO/FAO Codex Alimentarius)[1]:

Օրգանական գյուղատնտեսությունում սերտիֆիկացումը համարվում է չափազանց կարևոր գործընթաց, քանի որ առանց դրա առկայության արտադրողն իրավունք չունի մթերքը վաճառելու կամ ներկայացնելու դա որպես օրգանական արտադրանք: Արտադրանքը կարող է մակնշվել որպես «օրգանական», ինչպես նաև կրել սերտիֆիկացման մարմնի անվանումը կամ նշագիրը և օրգանական արտադրանքի համապատասխանության նշանը, եթե սերտիֆիկացման մարմնի կամ նրա կողմից ճանաչված սերտիֆիկացման այլ մարմինների կողմից սերտիֆիկացված օրգանական ծագման բաղադրամասերը հումքի կշռի առնվազն 95%-ն են՝ բացառությամբ ջրի և աղի: Մնացած 5% բաղադրամասերը պետք է ընդգրկված լինեն օրգանական գյուղատնտեսության մեջ թույլատրելի և սահմանափակ թույլատրելի նյութերի անվանացանկում: Ընկերությունները, որոնք զբաղվում են օրգանական սերմնաբուծությամբ, օրգանական արտադրանքի մանրածախ առևտրով, կարող են ստանալ օրգանական հավաստագրում[2]:

«Տրինիտին» առաջին օրգանական գինեգործական ընկերությունն է Հայաստանում, որը 2016-ից, Եվրամիության աջակցությամբ, երկրում զարգացնում է օրգանական գյուղատնտեսությունը: «Տրինիտի» ընկերությունը մեծ նշանակություն է տալիս օրգանական գինու արտադրությանը՝ կարևորելով ոչ թե քանակը, այլ որակը, չկիրառելով ժամանակակից զանգվածային արտադրությանը բնորոշ տեխնոլոգիաներ: Ընկերությունը տարեկան արտադրում է 30 000 շիշ, որի մեծ մասն արտահանվում է, իսկ ՀՀ-ում վաճառվում է մասնագիտացված խանութներում: Վաճառքում առկա է «Տրինիտի» գինիների 9 տեսակ[3]:

Ոչ ամբողջական տվյալներով՝ 2018 թվականին 64 տոննա և 84 հազար լիտր օրգանական արտադրանք է արտահանվել Հայաստանից՝ ավելի քան 185 մլն դրամ արժողությամբ[4]:

Օրգանականը, ի տարբերություն ավանդական գյուղատնտեսության արտադրանքի, երեք անգամ ավելի սննդարար է: Այն անվտանգ է առողջության համար, ավելի շատ վիտամիններ և հանքային աղեր է պարունակում, զերծ է վնասակար թունաքիմիկատներից, որոնք վերամշակված սննդամթերքում օգտագործվում են որպես սննդային, համային հավելումներ և կոնսերվանտներ, բացի այդ, ապահովում է մարմնի նորմալ քաշ, բարենպաստ ազդեցություն ունի մարդու ընդհանուր առողջության վրա, օգտակար է հատկապես երեխաների համար: *Օրգանական արտադրանքն ունի առողջ յուղային թթուների ավելի բարձր մակարդակ, որի շնորհիվ հնարավոր է պայքարել սրտի հիվանդության դեմ, և հակաօքսիդանտների ավելի բարձր մակարդակ, որի շնորհիվ հնարավոր է պայքարել քաղցկեղի դեմ:*

---

[1] Էկոգլոբ օրգանական սերտիֆիկացման մարմին, պաշտոնական կայք՝ ecoglobe.com

[2] Օրգանական գյուղատնտեսական արտադրանքի սերտիֆիկացման ուղեցույց, 2016:

[3] Տրինիտի Կանյոն Այգիներ, vayotsdzorwineroute.com / «Տրինիտին» առաջարկում է Հայաստանում առաջին օրգանական գինիները, banks.am

[4] Հատված գյուղատնտեսության նախարարության փորձագետ Աշոտ Գրիգորյանի հետ զրույցից, gastrovino.mediamax.am

Օրգանական արտադրանքի տեսականին, սկսած թարմ մրգերից և բանջարեղենից մինչև պատրաստվելիք գինիներ, պանրեղեն և այլն, աճում է տարեցտարի (հավելված 5՝ ՀՀ-ում կարևոր օրգանական արժեշղթաները): Վաճառքի ուղիները տարբեր են, ներառյալ՝ տեղական օրգանական շուկաներ, օրգանական խանութներ գյուղական կամ քաղաքային վայրերում, ճանապարհային վաճառքի կետեր, վաճառք անմիջապես ֆերմայից, օրգանական արտադրանքի առցանց պատվերներ, սուպերմարկետներ, ռեստորաններ և այլն: Հարկ է նշել, որ ավանդական գյուղատնտեսական արտադրանքի նկատմամբ գնային տարբերությունն ավելի փոքր է այն երկրներում, որտեղ օրգանական արտադրանքը հիմնականում վաճառվում է սովորական մթերային խանութներում: ՀՀ-ում օրգանական արտադրանք վաճառվում է հիմնականում մասնագիտացված խանութներում, իսկ օրգանական արտադրանքի մասնագիտացված խանութները նախատեսված են բավարար չափով տեղեկացված և գնողունակ սպառողների համար: Ի տարբերություն օրգանականի, ավանդական գյուղատնտեսական մթերքի գինը չի ներառում էկոլոգիական մաքրման արժեքը, բացի այդ, օրգանական գյուղատնտեսությունը պահանջում է ավելի շատ աշխատողներ և աշխատանքի վերահսկողություն, ինչի հետևանքով առկա է գնային տարբերություն: Գնային տարբերությունը պայմանավորված է նաև օրգանական մթերքի նկատմամբ շուկայական պահանջարկի՝ ներկայիս համեմատաբար ցածր մակարդակով: Որպես պահանջարկի վրա ազդող գործոն՝ դիտարկենք բնակչության եկամուտները (հավելված 3): Աղյուսակ 2-ից երևում է բնակչության եկամուտների աճի միտում, սակայն աղյուսակ 3-ը փաստում է, որ ՀՀ-ում եկամուտները բաշխված են անհավասարաչափ, մասնավորապես՝ 2013-2018 տարիների կտրվածքով միջինում ոչ աղքատները կազմում են ընդհանուր բնակչության 71.6%-ը, իսկ աղքատները՝ 28.4%-ը: Նույն ժամանակահատվածում աղքատության վերին գծի միջին սահմանը ամսական 41042.5 ՀՀ դրամ է, ուստի բնակչության մեծ մասը ունակ չէ գնելու բարձրորակ և թանկարժեք արտադրանք:

Աշխարհում օրգանական արտադրանքի պահանջարկը տարեցտարի ավելանում է, բազմաթիվ երկրներում իրականացվում են նաև սպառողների իրազեկման աշխատանքներ: ՀՀ-ում, ցավոք, հանրային իրազեկում չի իրականացվում, պետականորեն խթանման աշխատանքներ չեն կատարվում: Բազմաթիվ են դեպքերը, երբ արտադրանքի վրա առկա է եղել «Էկո», «Բիո», «Օրգանական», «Էկոլոգիապես մաքուր արտադրանք» կեղծ մակնշումները՝ ավելի բարձր գին սահմանելու համար: Արդյունքում, անբարեխիղճ մրցակցության հետևանքով սպառողն ընկնում է մոլորության մեջ: ՀՀ-ում օրգանական արտադրանք սպառողների առաջին հետազոտությունը կատարվել է 2005 թվականին Հայկական օրգանական գյուղատնտեսության հիմնադրամի կողմից (AOAF 2006): Հետազոտության արդյունքները ցույց են տվել, որ մարդկանց մի մասը հակված է գնել օրգանական արտադրանք, սակայն անտեղյակ է մակնշումից կամ սերտիֆիկացման չափորոշիչներից[1]:

Մեր օրերում լայն տարածում են ստացել գենետիկորեն մոդիֆիկացված օրգանիզմներ պարունակող մթերքները, այդ իսկ պատճառով անհրաժեշտ է

[1] The Status and Potential of Organic Agriculture in Armenia / A background document for the Greening Economics in the Eastern Neighbourhood (EaP-GREEN) partnership programme 2015.

հատուկ ուշադրություն դարձնել արտադրանքի մակնշմանը: Հարկ է նշել, որ գիտնականներն արդեն լոլիկի ԴՆԹ գենի մեջ ներկառուցել են արկտիկական ձկան՝ կարմրալայի գենը, որի շնորհիվ լոլիկը երկար ժամանակ պահպանում է իր ապրանքային տեսքը: Ներկայում ստեղծվել է ԳՄՕ բույսերի ավելի քան 120 տեսակ, (օրինակ՝ սոյա, եգիպտացորեն, բրինձ, դդմիկ, վարունգ, լոլիկ, ցորեն, կարտոֆիլ, բամբակ, շաքարի ճակնդեղ և այլն): Գենետիկորեն ձևավորված օրգանիզմ (ԳՁՕ) կամ գենետիկորեն մոդիֆիկացված օրգանիզմ (ԳՄՕ) ասելով՝ հասկանում ենք օրգանիզմ, որի գենոտիպն արհեստականորեն փոփոխվել է գենային ինժեներիայի մեթոդներով: Գենային փոփոխությունները կատարվում են՝ գիտական և տնտեսական նպատակներից ելնելով: Դրանց բացասական ազդեցությունները բացահայտելու համար կատարվել են բազմաթիվ փորձեր: Ռուս գիտնականները կենդանիների վրա իրականացրել են անկախ հետաքննություն՝ կերակրելով ԳՁՕ պարունակող կերով: Փորձերի արդյունքում պարզվել է, որ կենդանիների մեծ մասը չի կարող սերունդ ունենալ, ինչպես նաև վերջիններիս մոտ հայտնաբերվել է ուռուցք: Գենետիկորեն մոդիֆիկացված մթերքների հաճախակի օգտագործման հետևանքով կենդանիները, որոնք ծնվել են, ունեցել են մուտացիաներ՝ զրկվելով սերունդ թողնելու հնարավորությունից[1]: Շուկան ողողված է ոչ օրգանական սննդամթերքով, իսկ ԳՁՕ պարունակող սննդամթերքի հաճախակի օգտագործումը նմանատիպ ազդեցություն է թողնում մարդու վրա: Հետևաբար՝ ՀՀ-ում ծնելիության նվազման միտումը պայմանավորված է նաև վերը նշված գործոնով (հավելված 1):

Հարկ է նշել, որ օրգանական գյուղատնտեսության զարգացումը խթանում է գյուղական տուրիզմի զարգացումը: **Գյուղական տուրիզմը** հանգիստն է գյուղական վայրում: Հանգստի այս ձևը զբոսաշրջիկներին և, հատկապես, քաղաքաբնակներին թույլ է տալիս գիտելիքներ ձեռք բերել գյուղական տնտեսության վարման վերաբերյալ, ծանոթանալ գյուղատնտեսական մթերքների արտադրությանը[2]: Զբոսաշրջիկը հնարավորություն է ունենում շփվելու տեղական համայնքի հետ, ճաշակելու ավանդական ազգային խոհանոցը գյուղական պայմաններում, ինչպես նաև ընդունելու էկոլոգիապես մաքուր սնունդ: Ոլորտը մեծածավալ ներդրումներ չի պահանջում, որպես ներդրող հանդես է գալիս գյուղաբնակը: Գյուղական տուրիզմի զարգացումը միաժամանակ կնպաստի մարզերի համաչափ զարգացմանը, զբաղվածության աճին և գյուղերի սոցիալական խնդիրների մեղմացմանը:

Եզրակացություն: ՀՀ-ում օրգանական գյուղատնտեսությունն ունի 17 տարվա պատմություն: Համոզված եմ՝ քչերը գիտեն այդ մասին: Գյուղատնտեսությամբ զբաղվողները դեռ լիովին չեն գիտակցում օրգանական գյուղատնտեսության առավելությունները՝ շարունակելով օգտագործել թունաքիմիկատներ և սննդային հավելումներ: Վաճառքի ուղիների ոչ արդյունավետ բաշխումը ևս համարում եմ հիմնախնդիրներից մեկը: Հայ սպառողների մի մասը չի ճանաչում օրգանական արտադրանքը, շատերն անտեղյակ են գենետիկորեն մոդիֆիկացված սննդամթերքի օգտագործման հետևանքներից, իսկ եկամուտների ցածր մակարդակն օրգանական արտադրանքը դարձնում

[1] «Հայաստանի գյուղական համայնքներում ագրոկենսաբազմազանության պահպանության և օգտագործման միջոցով կենսապայմանների բարելավում» ծրագրի արդյունքներ, 2016:

[2] Գյուղական տուրիզմի զարգացման ծրագիր, nabu.am

է անհասանելի սպառողի համար: Օրգանական արտադրանքի շուկան զերծ չէ անբարեխիղճ մրցակցությունից, ինչը վկայում է վերահսկող մարմինների անհետևողականության մասին: ՀՀ-ն չի օգտագործում իր ողջ ներուժը ոլորտի զարգացման հարցում, մինչդեռ օրգանական գյուղատնտեսությունն առաջարկում է լավագույն մարդասիրական բանաձևը գյուղատնտեսական արտադրանքի արտադրության համար. հոգ տանելով բնության և ապագա սերունդների մասին՝ ստանալ շահույթ:

Գրականություն

1. Երիցյան Ս. Կ., Գրիգորյան Հ. Է., Օրգանական երկրագործության հիմունքներ, ուս. ձեռնարկ, Եր., 2019:
2. Օրգանական գյուղատնտեսության ուղեցույց, 2018:
3. Օրգանական գյուղատնտեսական արտադրանքի սերտիֆիկացման ուղեցույց, 2016:
4. «Օրգանական գյուղատնտեսության մասին» ՀՀ օրենքը:
5. «ՀՀ գյուղական համայնքներում ագրոկենսաբազմազանության պահպանության և օգտագործման միջոցով կենսապայմանների բարելավում» ծրագիր, 2016:
6. Հողերի վերականգնման պլանավորում և տեխնոլոգիաների կիրառում, 2016:
7. Դարբինյան Ն., ՀՀ-ում օրգանական շուկայի ներկա իրավիճակը, խնդիրները ու հնարավորությունները, ՀՀ գյուղատնտեսության նախարարին կից հասարակական խորհրդի 02.11.2016 թ.-ի նիստի զեկուց:
8. The Status and Potential of Organic Agriculture in Armenia / A background document for the Greening Economics in the Eastern Neighbourhood (EaP-GREEN) partnership programme 2015.
9. Գյուղատնտեսության զարգացման ուղիները ՀՀ-ում, 2016:
10. Գերմանիայի բնության պահպանության միություն, nabu.am
11. orwaco.am
12. ecoglobe.com
13. armstat.am

Հավելված 1

Օրգանական գյուղատնտեսության կայունության նպատակները

Օրգանական գյուղատնտեսության ուղեցույց, 2018 (էջ 9)

Հավելված 2

ՀՀ հողային ռեսուրսների կառուցվածքը



ՀՀ գյուղական համայնքներում ագրոէկոլոգիական գյուտերի պահանջների և օգտագործման միջոցով կենսապայմանների բարելավում- հետագի արդյունքներ/ Հողերի վերականգնման պլանավորում և տնտեսագիտության կիրառում. 2016

Հավելված 3

Աղյուսակ *1*

	2012	*2013*	*2014*	*2015*	*2016*	*2017*	*2018*
Ընդամենը դրամական եկամուտներ մեկ շնչի հաշվով (միջին ամսական)	39056	42404	49535	52377	56544	58474	61047
Միջին ամսական անվանական աշխատավարձ, դրամ	113163	146524	158580	171615	174445	177817	172727
Իրական աշխատավարձի ինդեքս, % (նախորդ տարի=100)	102	98.4	105.1	104.4	103.1	100.9	101.5
ՍԳԻ (նախորդ տարի=100)	102.6	105.8	103.0	103.7	98.6	101.0	102.5

Աղբյուրը՝ ՀՀ վիճակագրական տարեգիրք՝ 2015, 2019 (armstat.am)

Աղյուսակ 2

	2013	2014	2015	2016	2017	2018
Ոչաղքատ	68.0%	70.0%	70.2%	70.6%	74.3%	76.5%
Աղքատ	32.0%	30.0%	29.8%	29.4%	25.7%	23.5%
Աղքատության վերին գիծ դրամ/ամիս	39 193	40 264	41 698	40 867	41 612	42 621
Չափավոր աղքատ դրամ/ամիս	32 318	33 101	34 234	33 418	34 253	13 071
Աղքատության պարենային գիծ դրամ/ամիս	22 993	23 384	24 109	23 313	24 269	24 827

Աղբյուրը՝ ՀՀ վիճակագրական տարեգիրք՝ 2014, 2015, 2016, 2017, 2018, 2019 (armstat.am)

Հավելված 4

Աղյուսակ 3

1000 բնակչի հաշվով	2014	2015	2016	2017	2018
Մշտական բնակչության թվաքանակը տարեվերջին	3010.6	2998.6	2986.1	2972.7	2965.3
Ծնվածներ	14.3	13.9	13.5	12.6	12.3
Պտղաբերության գործակից. 1 կնոջ հաշվով, երեխա	1.7	1.6	1.6	1.6	1.6
Բնական աճ	5.1	4.6	4.1	3.5	3.6

Աղբյուրը՝ Հայաստանի վիճակագրական տարեգիրք. 2019

Հավելված 5

ՀՀ-ում կարևոր օրգանական արժեշղթաները[1].

- Միրգ և հատապտուղ (թարմ, չորացրած, պահածոյացված, հյութեր, նեկտարներ, ըմպելիքներ, կիսաֆաբրիկատ խյուսեր և խտանյութեր, IQF (հատիկային արագ սառեցված), ինչպես, օրինակ, խնձորը, տանձը, սերկևիլը, ծիրանը, սալորը, նուշը, բալը, հոնը, նուռը, խուրման, թուզը, ազնվամորին, մոշը, հաղարջը և այլն:
- Բանջարեղեն (թարմ, չորացրած, վերամշակված, պահածոյացված), ներառյալ կանաչեղեն/խոտաբույսերի տեսակները, որոնք կիրառելի են որպես համեմունքային ու արոմատիկ (օրինակ՝ տեղական ռեհանը, ծիտրոնը, թարխունը, թարմ, չորացրած, վերամշակված), որպես ժառանգություն պահպանելու կարիք ունեցող տեղական սորտերը (սոխի, սխտորի, լոլիկի, ցորենի, հացազգիների և այլն):
- Վայրի դեղաբույսերի և համեմունքային տեսակների մշակովի ցեղակիցներ, ինչպիսիք են երիցուկը, անիսոնը, սամիթը, զաֆրանը, այլ մշակաբույսեր: Վերջին տարիներին մի շարք ցուցադրական մշակովի աճեցումներ են կատարվել, որոնք ցույց են տվել, որ նշված տեսակներն ունակ են բարեհաջող աճելու նաև Հայաստանում:
- Օրգանական սերմնարտադրություն օրգանական շուկաների համար (առվույտը և շատ այլ մշակաբույսերի սերմեր):
- Խաղողը (թարմ, վերամշակված, չորացրած, գինի, հյութ, խտանյութ, քացախ և այլն):
- Յուղատու բուսատեսակներ՝ կտավատի սերմը, ընկուզատեսակները (թարմ և վերամշակված տեսքով)՝ տեղական և միջազգային շուկաների համար:
- Յուրահատուկ հացազգիներ և էնդեմիկ տեսակներ (օրինակ՝ ցորենը, հաճարը, գարին, տրիտիկալեն, կտավատի տեղական սորտերը և այլն), հատկապես նրանք, որոնք նպաստում են հնագույն ավանդական սորտերի պահպանմանը և դրանց օգտագործմանը:
- Վայրի բույսերի տեսակներ, ներառյալ պտուղները (հոն, ալոճ, խնձոր, նուռ, տանձ, մասուր, չիչխան և այլն), հատապտուղներ (ազնվամորի, մոշ և այլն), դեղաբույսեր և արոմատիկ խոտաբույսեր՝ թարմ, համեմունքային, վերամշակված ձևով օգտագործելու համար (մինչև 900 վայրի տեսակներ ավանդականորեն հայտնի են Հայաստանում՝ որպես սնունդ և բուժական նպատակներով օգտագործելու համար).
- Ընկույզներ (ընկույզ և պնդուկ՝ թարմ, կեղևահանած):
- Մեղվապահության և մեղուների հետ կապված ապրանքներ, ինչպիսիք են մեղրը, ակնամոմը, մայրակաթը, ծաղկափոշին, մեղրամոմը և այլն (հումք և վերամշակված):

---

[1] Դարբինյան Ն., ՀՀ-ում օրգանական շուկայի ներկա իրավիճակը, խնդիրները ու հնարավորությունները, ՀՀ գյուղատնտեսության նախարարին կից հասարակական խորհրդի 02.11.2016 թ.-ի նիստի զեկույց:

СОНА ГРИГОРЯН
Экономика, бакалавриат, 4-й курс

ПРОБЛЕМЫ ОРГАНИЧЕСКОГО СЕЛЬСКОГО ХОЗЯЙСТВА В РА

Ключевые слова: *органическое сельское хозяйство, земельные ресурсы, органические удобрения, сертификация, ГМО*

В работе были исследованы сущность, преимущества, цели, задачи органического сельского хозяйства и сделаны выводы. Представлены критерии, место и роль органических продуктов на рынке. Целью работы является выявление проблем органического сельского хозяйства в Республике Армения.

SONA GRIGORIAN
4th Year, Bachelor's Degree, Economics

ISSUES OF ORGANIC AGRICULTURE IN THE RA

Key words: *organic agriculture, land resources, organic fertilizers, certification, GMO*

In the present paper, the essence, advantages, goals and objectives of organic agriculture are analysed conclusions are made. The criteria, place and role of organic products in the market are presented. The aim of the research is to identify the problems of organic agriculture in the Republic of Armenia.